

## ԳՐԱԿԱՆ—ԲԼՈՒԷ ՄԻՔԱՆ

Ս Ա. Փ Օ \*)



ՔննՇ պատկեր. արեւը թիւր շողերով  
Վերջալոյսի ուկիներն է շաղ տալիս.  
Հսկայ ժայռերն հողմի դիմաց անխոռով  
Նայում են ցած, որտեղ ծովն է ոռաւմիս:

Ուկի ամսերն առաջանում են հանդարտ  
Դեպի անհուն բարձունքները երկնքի,  
Մինչ զեփիւոն հեզ սօսափում է անընդհատ,  
Աւ հեծում է ուռին ծովի եզերքի:

Եւ բարձրաբերձ ժայռի զլիսին լուռ կանգնած,  
Դալկասալիտակ, բռնած ձեռին մի քընար,  
Աշբով հրացայտ, ումքով մուոյլ, այլայլած,  
Հեծեծում է Սափոն. Մուսան վշտահար:

Նայի՛ր, Սահօ, համակուած սիրողու վշտով,  
Քեզ է սպասում յորձանքն եռուն, ահաւոր.  
Նրա մոռնչն, ինչպէս հառաշ խոր շեշտով,  
Քեզ ասում է «Ընկի՞ր», երգիչ սպասոր:

Գլխիու ունիս պսակ դափնուց, մրտենուց,  
Ողողեւ են քեզ մազերը արձակած.  
Չայն է զալիս մազերու շարժող խիստ քամուց.  
«Ընկի՞ր», «Ընկի՞ր», ով ոու մուսան վշտազգած:

\*) Նշանաւոր յոյն քնարերգակ բանաստեղծունի. Գրիստոսից մօտ 600 տարի առաջ Միւտիլէն քաղաքում Անորու կղզու վրայ. սիրահարուած էր Փառն անուն մի վայելչաղեղ երիտասարդի վրայ, որի պատճառով եւ յուսահատուած ինքնիրան զահալիք ծով.

Սակայն դաշտը ուղին ոք կայ ծովափին,  
Մրմսջում է զլուխն հակած ուսի ծով,  
Մրմսջում է սիւրի շնչով մեղմագին.  
«Մի, Սակիօ, մի, ետ դարձիր, ետ, շտապով»:

«Ո՛չ, զոշում է Սակիօն, ծովն իմ զերեզման,  
Անհար է ինձ այստեղից դառնալ ետ».  
— Սակիօ, Սակիօ. ցաւերը խոր, անսահման,  
Ետ դարձիր, ետ, աստուածների սիրուն գէթ:

Նայիր, նայիր, ծովն ինչպէս է կատաղած.  
Անդային, զարհուրելի մի շիրիմ:  
Լիբ կոչը երկրի ծաղկով պակած.  
«Մի, Սակիօ, մի, մեղք ես, անզին մոներիմ»:

Ներշնչումի ճառագայթը թեւառը  
Ուկի ուկի փողփողում է քո աշքում:  
Պայծառազեռ կախուած է մի պասկ նոր՝  
Գլխիդ վերեւ, ու քո փառը է հոչակում:

Փայլատակում է ոեռ լոյս արեւի,  
Գարունը ոեռ վարդեր ունի սուրաւէտ.  
Եւ Հելիկոնն <sup>4)</sup> ունի դափնիք դաշտի.  
Աստուածների սիրուն, Սակիօ, դարձիր ետ:

— «Եւ չեմ ուզում ես վարդն անոյշ, չեմ ուզում.  
Եւ չեմ ուզում Հելիկոնեան դափնին ես.  
Երբ հոգու մէջ սերկրանը մայր է մոնում,  
Փառքը նոյնիսկ էլ դառնում է ցաւի պէս:

Ինձ ի՞նչ օգուտ զարդան ժպտիցը քաղցրիկ,  
Գարունն այլեւըս Փառնին թող ժպտի.  
Նրան թող տայ իր ծաղիկները փափկիկ.  
Թող անսպառ խինոերի մէջ նա փթթի:

4) Մուսաներին նույրուած լիո՞ Բիովտիայում.

Բայց ամսուն որ հառաջանքիս ողբազին  
Պիտի լոէ նա արծագանզը յաւէտ.  
Սոուերաթեւ սլանայ պիտ' իմ հոգին  
Որտեղ նա է ու միշտ ասկի նրա հետ:

Գիշերն հէնց որ սնոյշ քունը հեշտական  
Դայ փակելու արտեւանինընը նրա,  
Հոգիս, այո, որպէս արթին պահապան,  
Նրա վրայ պիտ' իր թեւերը բանայ:

Պիտի կըի հոգու ոէմբը օղեղէն  
Մըմսչելու նրան խօսքեր սիրարծարծ.  
Ու Սափիօիս, դափնեսպակ, դալկաղէմ,  
Պիտի տեսնէ նա երազնւմը յանկարծ:

Աշերն, աւաղ, պիտի բանայ ոռղալով,  
Խղճի խայթից ցաւով պիտի համակուի,  
Սիրտը լցուած, թեւերը ինծ քանալով,  
Մինչ սոուերս պիտի փոխուի խաւարի,

Ճիշտ ինչպէս որ Տարտարոսի խաւարում  
Լաերտոսի որդին<sup>1)</sup> ահով, ոռղալով  
Աստիկլէին<sup>2)</sup> իրա զիրկն էր բաց անում,  
Բայց սոուերը անհետացաւ խոյս տալով:

Մնաք բարեն, զարնւն, երկիր ու երկին,  
Մնաք բարեն, փառքիս օրե՛ր ուկեղէն,  
Եւ դու, Փա՛օն, անզութ բայց իմ պաշտելին,  
Ընկնում եմ ծով, մասս բարեն, Միտիւլէն:

Աղմկեցին ալիքները փրփրած,  
Հէնց որ նրանց ցուրտ գրկում նա տեղ գտաւ.  
Նրա կեանքի մարեց ջահը լուսազգեաց  
Այն վայրկենին, երդ արեւը<sup>3)</sup> մայր մնուաւ:

1) Ողիսեւս. 2) Ողիսեւսի մայրը.

3) Բնագրում՝ Փերուը.

Ժայռն ու ալիք, ուռենին ու լոռվթիւն,  
Միահամուռ հառաշեցին տխրազին.  
Չկնկուլներն, ահարեկած ու տրտում;  
Բացին թեւերն ու խոյս տուին խմբովին:

Ու խաւարչուտ երը զիշերուայ ընկաւ քող  
Այն ստուերոտ ջրերի վրայ լայնատար,  
Արցունքի տեղ հոսեցին մի դալուկ շող  
Հեսպերոսն<sup>1)</sup> ու Փելէն<sup>2)</sup> մաքուր ու պայծառ:

Եւ ճամանշը արշալոյսի երը շողաց,  
Երը ընութիւնն ամրոջ լոյսի մէջ լողաց,  
Ուռենոց էլ մի սօսափիւն լսուեցաւ,  
Թէ «վշտահար Մուսան այստեղ թաղուեցաւ»:

Հապա ողը անտառաքնակ սոխակի,  
Կամ մեղեղին մուսսների գեղերգակ . . .  
Դրանց պարը ժայռի զլիսին ծովափի  
Յուզուած յուզուած մահուան հնչում էր նուազ:

Հեղ. Տիկ. Կ. ՊՐԵՎԵԶԻՕՏԻՒ\*)

Թարգմանեց յունարէնից՝  
ՄԵՍՐՈՊ Վ. ՄԱՂՍՈՒԻՆՅԱՆՑ

1913 փետր. 14.

1) Գիշերուայ աստուածութիւն.

2) =Լուսեակը.

\*) Ժամանակակից յրյն բասաստեղծութիւն, Կ. Պօլսեցի.